

դաշնակցի՝ Միհրդատի հետ համեմատելով՝ «Թէպէտ չկարէր նա գա, ի կշխ համեմատութեան ընդ դրացւոյն իւրում» (Միհրդատայ) ոչ հանձարով և ոչ բուսով բարուցն՝ ունէր ընդ նմա զօյդ հաւասար եռանդն մեծանալոր: Խնչքան էլ Տիգրանը բախտաւոր ասաղի տակ ծնուած լինէր և քաղաքական հանգամանքները նպաստաւոր լինէին նորան, միթէ կարելի՞ է կարծել որ նա առանց ներքին մեծ արժանաւորութեան, առանց «փոշեմագոյն» և «մեծիմաստն» լինելու կարող էր այնքան մեծ յաջողութիւն ունենալ: Այն ժամանակ, արդարեւ, նա պէտք է «ողի իմն» լինէր, ինչպէս հաւատում էին ժամանակակիցները, մի հաւատ, որի յիշողութիւնը նոյնպէս մեացել է երգի մէջ: Նա կուռում է «կատարեալ դիւցազն» հասակաւ և ընութեամբ, «քանչելի դիւցազն» (Ա. իդ. Հմտ. Ա. լա. «բայց ըստ դիւցազնութեան կարծեաց ... մի է և միայնակ հայկազնց» Տիգրան Ա. իդ. «Գեղաւորքն ... դիւցազնացեալք»): Ծիշդ է հռոմայեցոց հետ ունեցած յարաբերաբերութեան մէջ երեսում է նորա անդուշութիւնը, բայց պէտք չէ մոռանալ, որ ինչպէս ծիշդ դասում է Ուկինաք: «Քսան և հինգ ամք ... անխառն յաջողութեան ետուն նմա սխակալել ... Սուտակասպասք հաւատացին թէ ողի իմն իցէ և ինքն յասազ իւր յուսացեալ էրու թողնում ենք այդ «պերճարան» թագաւորի հովանաւորութիւնը յունական գպրութեան և ճարտասանութեան, թողնում ենք և այն, որ իւր երկիրը ծաղկեցնելու համար՝ յոյն և հրեայ գերիներ և բերում չայսատան:

Դալով նորա արդարադատութեանը շափաւորութեանն ու ուղղախոհութեանը՝ գուցե, տրամադիր լինէինք կարծելու, որ այդ հատուածը ճարտասանական ծաղում ունին: Սակայն Խորենացին հենց այդտեղ յիշում է հին ժողովրդական երգերն ու դովեստներն իրեւ ազրիւր: Խորենացուն չհաւատալու ոչ մի տեղիք չունինք: Մնում է, ուրեմն, Տիգրանի գովեստը՝ «պարկեշան ի կերակուրս և յըմպելիս: և ի խրախճանութիւնս օրինաւոր ... և ի ցանկութիւնս մարմնոյն շափաւոր» համարել ժողովրդի իդէալացումն, քանի

որ Մեծն Տիգրանի համար ասում են, էր «մէտ ի հեշտանս» և արեւելիան սովորութեամբ բազմաթիւ կանայք ուներ: Այդպիսի մի զաղափարական նկարագիր է անշուշտ այն հաւասար արդարագատութիւնը, որ հայ ժողովուրդը ցանկացել է, որ իւր սիրելի թագաւորն ունենայ: «Արդարագատ և հաւասարակար կշխու ունելով յամենայնի, զամենայն ուրուք կենցաղ մատցն լծակաւ կը էր: Ոչ ընդ լաւադոյնսն խանգայր և ոչ զնուաստն արհամարհէր, այլ ամենեցուն հասարակաց հնարեր զինամոյն՝ իւրոց ի վերայ արդարեկ զգիսասաւ»:

Նկատենք դարձեալ վերջին անդամ, որ այս ինչպէս և վերելի խօսքերը ինչքան էլ աղոնց բովանդակութիւնը երգից առնուած լինի, զուցէ սակաւ բացառութեամբ՝ բառացի երգինը չեն հարկաւ: Խորենացին միշտ իւր սիրած ճարտասանական լեզուով է պատմում կամ իւր ազրիւրի ճարտասանական ոճով ու լեզուով:

(Կըշարունակուի)

Մ. Աբեղեան.

ՄԱՆՐԱԼՈՒՐՔ

Կաղամբը փացնող միջամաներին ունցացմակաւ ամենահամար միջոցը: — Ըատ միջոցներ են գործ գրուած մինչև այժմ այդ վնասակար միջամաներին ոչնչացնելու համար, բայց մեծ մասամբ փորձերը անյաջող են անցել: Եթէմ պ. Շրէյներ - Յամլեդիլ տեսա Գազետ- լրագրի Սեպտեմբերի 23-ի համարում գոյա վնասների առաջն առնելու ամենահամար միջոցն է սովորեցնում: Պէտք է կացնել մի Յ արշին երկարութիւն ունեցող կլոր ձողի վրայ մի արշին երկայնութեամբ քաթման, դրօշակի ձևով: Քաթմանի լայնութիւնը հիմքի մօտ պիտի լինի 9 վերշոկ: որ դէպի վերև հետզհետէ նեղանալով պիտի 6 վերշոկ դառնայ: Գործն սկսելուց առաջ քաթմանի երկու կողմից էլ պէտք է քսել թանձը և մածուցիկ մազիտ (տելեժիա սոլա), ձողի հակառակ կողմը մի քանի վերշոկ մաքուր թողնելով: որպէս զի թափահարելու ժամանակ կաղամբի ծայրերը չներկուին: Մազիալը քսելուց առաջ պէտք է աւելի մածուցիկ դարձնել կրակի վրայ պահելով: ապա քսելուց յետոյ պէտք է ման գալ արտի մէջ

և արագ արագ թափահարել ձողը, այնպէս որ քաթանի մաքուր ծայրը կպչի կաղամբի դիմուն: Այդ միջոցը կստիպէ միջաներին անհանգստանալ և դուրս գալ կաղամբի միջից ու գեղի բարձր թռչել, որի ժամանակ նորա կկպչեն մազիս քսած քաթանին և կմնան սատկած նորա վրայ: Այս որսորդութիւնը պիտի անել օրուայ տաք ժամերին: Ժամանակ առ ժամանակ անհրաժեշտ է նորոգել մազիտը և երբ բռւական հաստանայ քաթանը, պէտք է քերել վրայից և նորից մազիս քսելով, նոյն կերպ շարունակել:

* *

Զինական կեանից: — Պեկինի Դփողցներից մէկում իրար են պատահում են երկու մանդարին, երկուսին էլ տանում փառաւոր պատգարակով, նոցանից մէկը կրում է ոսկեայ կոճակ: միւսը՝ կարմիր, երկուսն էլ միաժամանակ դուրս են թռչում պատգարակներից և փոխարինում են հարիւրաւոր երկրպագութիւն: որից յետոյ տեղի է ունենում հետեւալ խօսակցութիւնը:

— Ողջո՞ն քեզ, հրաշագեղդ երկնից ասաղ, իմ աշքերս մինչ այն աստիճան խղդում են քո հրաշափառ լոյսիցդ: որ չեմ համարձակուում շըրթունքներս քո աստուածային գարշապարներիդ մերձեցնել...

— Ինձ պէս մի գարշելի որդի համար խիստ մեծ պատիւ է այդ ամենը, իմ ուրախութեան բաժակը լիքը կինի, եթէ յայտնես որ կանաչ վիշշապը հովանաւոր է քո առողջութեան: Խոկ ինչպէս է քո յարգանաց արժանի պատուական հայրդ:

— Այդ պառաւ անասունը սողալով և տառապելով անցնում է օրերը... բայց քո վսիմապատիւ հայրդ ծեր է, գործունեայ և ամուր, ինչպէս բամբուկ: Եւ ովք կարող է առաւել գեղցցիկ լինել այս աշխարհում: քան քո մայրդ....

— Աթէ՞ միթէ այդ սատկած գորտի մասին խօսել: Մի կողմ թռղնենք իմ զզուելի ծնողներիս, որ ամրող աշխարհի զզուանքի առարկայ են: Աւելի լաւ է քո գեղեցկութեան տիպար զաւակներիդ մասին տեղեկութիւնը տուր, որ արշալոյսի պէս վարդակարմիր են, կայսերական վիճակների մեղքի շափ անուշ են և զեր ևս մանկութեան ժամանակ այնքան խելազեղ են, որչափ իւրեանց պատուական նախնիքը:

— Երկինքը, իւր անհուն ողորմութեամբ և նախատեսութեամբ մեղ մի տուն է պարգեել, որի պատերը մինչ այն աստիճան բարձր, որ կարող ենք ստաների աշքից ծածկել մեր զզուելի լակուներին: Ես և կինս, նախանձից գեղուում ենք, երբ հանդիպում ենք այն վարդի շքնազ կոկաներին, որ երկնից սիալով միայն քո որդիներն են կոչւում:

Երեկ մենք բաղդաւորութեան եօմներորդ երկընքում էինք, երբ հանդիպեցանք նոցա ձեր յարգամենծար 2ի—փու—8ի քրոջ հետ:

— Այն զառամեալ կովին ...

— Այս, ոչ, նա թէյի ծաղկի աննման ծաղկներից է...

— Պէս շպրտելու, ծակ զունգուլակ...

— Օ, Աստուած ոչ անէ, նա աստուածունու գուստորն է և շքնազ որպէս լօտոս: նորա աշքերը հրափայլ են, որպէս արեգակն ու ասողերը, իսկ նորա շունչը՝ ծաղկող յասմիկի տեղը կրանէ...

— Այսօր ինչպէս երկում է զմայլումների աշխարհն ես փոխազրուել: բայց ժամանակ է արդէն որ իսկական դրախտոր վերադառնաս՝ քո տունը: Խոկ ես պէտք է իմ խլուրդի ծակը գնամ: Խմ լեզուովս քո աստուածային սաքերիդ փոշին եմ մաքրում ...

— Ես ես նոյնը կանեի: եթէ ինձ արժանի համարէի, ես շափազանց անարժան եմ: Բայց երկները հաշու աշքով կը նայի ինձ, եթէ այս երեկոյ դու հաճեիր մի բաժակ թէյ վայելել քո ծառայի ամենաաղքատիկ և գարշելի իւրձմի մէջ, այն մարդու, որ իւր սեփական շնչից իսկ զզում է:

— Խսկապէս ես խելքամաղ եմ լինում ի նկատի ունենալով այն պատիւը, որին այժմ արժանացայ ... բայց միթէ չես վախենում: իմ գիմի տեր, որ իմ ներկայութիւնս կսրբապղծէ քո արքայութիւնդ:

— Ընդհակառակն: ես իրը մի երկնային շնորհ կինքրելում քո օրհնեալ ոտքդ իմ նողուկ հիւղիս շէմքի վրայ գռնէ զնես:

— Օ, մեծդ և իմաստունդ, թող գեղին վիշապը քիչ հովանե լինի:

— Օ, ամենազօրդ: հարիւր անգամ աճիւններս կսփռեմ քո առաջ ... թող կանաչ վիշապը քայլափոխ անգամ չհեռանայ քեզնից ...

— Նոր հարիւրաւոր երկրպագութիւններից յետոյ մանդարիները բաժանուում են իւրարից:

— Օձի զաւակ ... մրթմրթում էր մէկը իւր քթի տակին:

— Խէզի ձուտ փնթփնթում էր միւսը:

* *

Տօկիայում (Ճապոնիայում) շուտով կրացուի կանանց համալսարան: Մայրաքաղաքի ամենահարուստ ընտանիքներից մէկը՝ Միտուի, այդ նպատակի համար տուել է 160 ակր գետին: Բարօն Կվասակի, Միտուի և Շիբուսավա ժողովին մօտ 130000ի են գումար, որով պիտի գնուի համալսարանի համար կահ-կարասի և կազմուի ընալուածական զործանոց: Աշխատանքներն արդեն սկսուած են, յա-

ջորդ ապրիլին յօյս ունեն համալսարանը պաշտօնապէս բացուած համարել:

* *

Հինացիներն ինչպէս և՛ վարուած իրենց աստուածների մէս. — Քարոզիչ Սմիան իր «Հինական կեանքեց գծեր» կոչուած գրքի մէջ հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում, թէ չինացիներն ինչպիսի յարաբերութիւնների մէջ են մտնում իրենց աստուածների հետ: Նրանք իրենց աստուածներին վերագրում են նոյն այն յատկանիշները՝ պահանջութիւնները ու թուլութիւնները, որոնց ենթակայ են մարդիկ և ամենենին երկնային կատարեալ էակեներ չեն համարում նրանց:

Յաճախ, ցանկանալով աստուածներին հաճոյանապաշտ չինացիները մեծամեծ խոստում ներ են անում որոշ գումարներ յատկացնել տաճարներին և կամ՝ որ և է բարենպատակ դործի նւերկների որդիները ստորագրում են մեծ մեծ թերթերի վրայ, որոնք սովորաբար կախուած են լինում կուռքի կազքին: Ասենք հազարական կոպէկ, սակայն իրք վճար ում են միմիայն 200-ական կոպէկ. Վատահայ լինելով՝ որ աստուածներին անկարող կընեն ճիշտ հաշուել: Խսկ տաճարի վերանորոգութեանց ժամանակ փակում են կուռքի աչքերը, որպէս զի չկարողանայ եղած զեզումները նկատել:

Հատ անգամ էլ կեղծ փող են նուիրաբերում իրենց աստուածներին, բոլորովին հաւատացած լինելով՝ որ մի կերպ անց կացնեն կիարին: Որովհեան նրանք կեղծն ու իսկականը չեն կարողանայ որոշել: Համաձարակ հիւանդութիւնների ու կուտարածների ժամանակ, ինչպէս խոլերան, ծաղիկը, սե ցաւը և այլն, աստուածների ողորմածութեան ու գթութեան արժանանալու համար, միակ ընդունելի զոհը մարդկային կեանքն են համարում: Սակայն թող չերկմտի ընթերցողը՝ թէ իսկապէս մարդու արիւն պիտի թափուի: Ա՛ երբէք: Խորամանկ չինացիները զրա ձարն էլ են գտել: Կուռքի առաջ գնում են մի ծակ սեղան, որի տակը մնում է զոհի ամբողջ մարմինը: Խսկ գլուխը՝ անցքից գուրս: Այս բոլորովին անյարձար գրութեան մէջ մի առ ժամանակ մնալով թշուառ զոհը, վերջը գուրս է գալիս տանջարանից: Եւ չինացիները ըստ ամենայնի գոհ են մնում: Բոլորովին հասկանալի պատճառով, մարդու զլուս էին զոհ բերել:

Մը անգամ տաճարում քրմի ու կուռքի մէջ իրը թէ վէճ է ծագում և կնքուա հարցը քննըւում է դատարանում: Ուր և աչքի էր լնկնում այնտեղ տարածուած կուռքը, որը դատարանի վրձով պէտք էր և զլուս խնարհեցնէր պատուարժանութիւններին: Որոշումը յայտնում է կուռքին, սակայն երբ անկատար է մնում դատարուների իրաւացի պահանջը, դատարանը բամբուկի

50 հարուած է որոշում տալ կուռքին և անմիջապէս ի կատար է ածում: Ծարունակ առատ ընծաներ են բերում կուռքերին, որոնցից իրը թէ կախումն ունին: ըստ չինացիների կարծեաց եղանակի բոլոր փոփոխութիւնները: Ահա մի այդպիսի դէպր, որ աեղի է ունեցել մի տօթ ու երաշտ տարում, երբ ամէն զօհարերութիւն ու խնդրուածք / զուր են անցել: Այդ ժամանակ յուսահատ ժողովուրդը բարկանալով, վերցնում է իւր կուռքին ու տանում արեգակի կիպիչ ծառագայթների տակ զնում, որպէս զի՞ անողոք կուռքը նիքն իր անձի վրայ փորձէ արևի այրող ոյժը:

* *

Քանի ժամ պիտի կ մնել: — Եղած փորձերը ցոյց են տալիս: Որ մարդու առողջութեան համար անհրաժեշտ է հետեւեալ չափով քնել: Երկու տարեկան երեխան պիտի քնի 18 ժամ: Երեքից վեց տարեկանը՝ 14 ժամ: 6-ից 8 տարեկանը 12 ժամ: 8-ից մինչև երիտասարդական հասակը՝ 10 ժամ: Զափահաս մարդու համար բաւական կարող է համարուիլ 7 ժամ: Որբան զարգացման է հասնում մարդուս ուղեղը, այնքան կարծատե քուն է պահանջում նրա համար: Անշափ շատ են քնում միայն խելագարներն ու վայրենիները: Որոնք ամէն մի բոպէ էլ կարող են քնել: Երբ ոչնչով չեն զրազուած և քնում են ամէն զիբրով: Նստած, կանգնած և կամ ծառի ու որ և է մի բանի յենուած: Քաղաքացիների համար աւելի քիչ քուն է հարկաւորում քան գիւղականների համար: Բոլոր մեծ մարդիկ օրական 4-5 ժամից աւելի չեն քնիլ և մինչեւ անգամ իրենց կեանքի վերջում բաւական են համարել 2-3 ժամը: Սակայն պատահել են բացառութիւններ էլ: Ամէնից առողջարար ու պինդ քունը կես գիշերուանից յետոյ եղածն է: Զափահաս մարդը պէտք է երեկոյեան ժամը 10-ին պառկի քնելու: Երեխանը փակ պէտք է քնել և շունչ պիտի առնել քմովի: Անկողինը, որքան միայն հնարաւոր է լուսամուտից հեռու պէտք է ձգել և կամ դնել: Անջարանը տան ամենամեծ սենենակը պիտի լինի: Անջարանի օդի բարեկամունքեան աստիճանը 15-ից պէտք է անցնի և առողջարար է աջ թեկի վրայ պառկել: Մէջքի վրայ քնիլը շատ վատ է ազգում որովայնի վրայ, իսկ ձախ թեկի վրայ քնիլը՝ սրաի և թողերի վրայ, անջարանից հեռացնել պէտք է վարագոյրները: Երեխաններին օրօնելը վատ է և կարող է ծանր հետեւեանքներ ունենալ նեարդերի վրայ, Երեխաններին միայն անկողնում պիտի պառկացնել քնելու:

* *

Հակայ ընկոյզ: — Հարաւային Ափրիկայի բուսական թագաւորութեան սրանչելիքներից մէկն էլ

այսպէս անուանուած «հրաշալի ընկոյզն» է, որ աճում ու հասնում է 15 սաժէն բարձրութիւն ունեցող արմաւենու մի տեսակի վրան։ Սրա տերեներն 3-ից և սաժէն երկարութիւն ունին, իսկ $1\frac{1}{2}$ սաժէն լայնութիւն։ Այս տերեների անթամէջը շատ հաստ է և նրա վերին կինեմոնագոյն վերնամաշկը, երբ գետին է ընկնում, նմանում է մի մեծ կոպիտ ու տակ տոպրակի։ Արական ձաղիկները $1\frac{1}{2}$ արշին երկարութեան են հասնում և 10 տարի շարունակ մնում են ու չեն ընկնում։ այդքան միջոց էլ անցնում է, մինչեւ լցում ու հասնում են պտուղները։ Ընդոյզներն երեք երեք և կամ չորս չորս են պատահում, որոնցից իւրաքանչիւրը $1\frac{1}{2}$ արշին շրջապատ է ունենում և թարմ միջոցին 50-ից մինչև 63 գրուանքայ է կշռում։

Իր հայրենիքումն անգամ այս վիթխարի ծառն երկար ժամանակ յայտնի չէր և որովհետեւ նրա պտուղները միմիայն ծովի վրա եղած միջոցին էին գտնւում։ այդ պատճառով էլ այդ պտուղները ծովային բոյսի բերք էին համարում։ Այս տեղերում, որտեղ ծովի ալիքներն ափն էին հանում այդպիսի ընդոյզներ, երկնային պարզեց էին ընդունում, և առում են, որ մոռոգով կայսրը 4000 ոսկէ գուլտէնով չկարողացաւ մի այդպիսի ընդոյզները բերել։

Այժմ այդ բայսը այն երկիրներն այցելող ծովագնացների համար այլ ևս առանձին հետաքրքրութիւն չի շարժում, սակայն ցաւօք որտի պետք է ասել, որ արմաւենու այդ տեսակը հետրզհետէ չբանալու վրայ է երկրիս երեսից։

* *

Զայլամը միու փոխարէն։ — Հարաւային Ափրիկայում բաւական ժամանակից ի վեր ազարակատէրերն սկսել են ձիերի փոխարէն ջայլամներ գործածել և այս իսկ նպատակի համար առանձին կրկէններ են շինել տաւել, որտեղ այդ թռչուններին հեծնելու են վարժեցնում։ Զայլամի վաղքն այնքան արագ է լինում, որ շատ անգամ անսովոր հեծնողի շունչն իսպառ կարւում է։

Մեծ գժուարութիւն չի ներկայացնում ջայլամներին հեծնելու սովորցնելը, որովհետեւ նրանք շատ շուտով են ընտելանում մարդկանց հետ և թէ ամենայն հազարնդութեամբ առանձին են, երբ նրանց մէջքին թամբ են դնում։ Սակայն առանձին ջանք ու հմտութիւն է պահանջում նրանց սանձի և կամ երասանակի վարժեցնելը։

ԶՈՒԱՐԱՅԱՅՐԵՐ.

Դատապարուածութիւն։ — Դատում էին մի խեղճ ու կրակ մարգու, որովհետեւ իւղ էր կեղծել, երեւ մեղաւոր չճանաչելով և, ըստ երևոյթին, չիմանալով, որ իւղ կեղծելով օրէնքով արգելուած է, զատապարտուած և երկմտութեան մէջ էր ընկել և չէր իմանում, թէ ինչ ասէր կամ ինչպէս արգարանար, երկար մտածելուց յետոյ, յանկարծ դարձաւ ու հետեւալ հարցը տուեց նախագահին։

—Պարու նախագահի, կարելի է, գործի պարզաբանութեան համար մի քանի խօսք ասելու իրաւունք խնդրել։

Նախագահ։ — Կարելի է։

Դատապարտուած։ — Ծատ շնորհակալ եմ։ Պարու նախագահի, ինդիրեմ թոյլ տաք հարցնելու շեղ, «Արգելօք օրէնք զիտէք»։

Նախագահ։ — Խնչպէս չէ, զիտէմ։ դրա համար և նախագահի եմ նշանակուած։

Դատ։ իսկ քիմիայ զիտէք, շարունակեց մեղադրուածը։

Նախ։ — Ո՛չ։ քիմիական հարցեր վճռելիս զիմում ենք զիտակ մարդկանց, քիմիկոսների։

Դատ։ Արգելօք հնարաւո՞ր է նրանցից մէկին էլ մի երկու բան հարցնել։

Նախ։ — Կարող էք, Ահա այն պարոնը քիմիկոս է, նրանից կարող էք իմանալ, ինչ հարկաւոր է ձեզ։

Դատ։ Կներեցէք, պարոն, համարձակութեան։ Արգելօք զուք քիմիայ զիտէք։

Քիմ։ — Խնչ ասել կուզէ, ի հարկէ, զիտէմ։

Դատ։ Իսկ օրէնք։

Քիմ։ — Ո՛չ։ այդ իմ մասնագիտութիւնը չէ։

Դատ։ (Ըստ ու հոգի առնելով). Ծատ լու պարոնները . . . Այժմ, ահա թէ ինչ կասեմ Ձեզ, Դուք, պ. Նախագահ, օրէնք զիտէք, բայց քիմիայ չըգիտէք. իսկ պարոն քիմիկոսը քիմիայ զիտէ, սակայն նա էլ օրէնք չզիտէ. Եւ գուք ինձնից միանգամայն պահանջում էք, որ թէ քիմիայ իմանամ և թէ օրէնք. Միթէ այդ հնարաւոր բան

